



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լիանգամայն մեխանիկ
կը գտնուին

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

Սինկերի
մեքենաները
կը գտնուին
միայն Սինկեր
Ընկերութեան
վաճառատանց
մէջ :

- | | |
|----------|--|
| ԱՅՐԱՆ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| ԿԱԼԿԱՐԱՆ | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ . |
| ԿԱԼԿԱՐԱՆ | (1. Սինկեր Խան, Թիւնէլի ետեւը . |
| ՊՈԼԻՍ | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՍԿԻՒՏԱՐ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| | Զարը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեայ երաւիաւորութիւն

Մասնահիշեր գաւառներու բոլոր ֆալաֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. Վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը :



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

Թերթ ազգային, գրական եւ ֆալաֆական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեռքէ վաճառում՝ քաղաք փարա : ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՎԱԼՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար : Մանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրութիւններէ, օրուան տեսութիւններէ եւայլն :

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին լայն տեղ է ուղղել Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մանուկի Ճատտէօի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 25

ՇԱՐԱՐ-

16 ՓԵՏՐՈՒԱՐ 1908

ՈՉ ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ

Դ Ի Մ Ա Կ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

Թերթիս առաջին էջերը ժամանակ մը նարեկացիին, Խորենացիին քար հանելու չափ մաքուր հայերէնով խմբագրականներ գրինք, դամբանականներու պէս լուրջ յօդուածներ թխեցինք, ի հեճուկս Շորէնհաւէրի և նմաններուն, իմաստասիրական, հոգեբանական գրուածքներ ուղեցինք մեծարել մեր ընթերցողներուն, և սակայն հակառակ մեր ջանքերուն և ճիգերուն՝ ժողովուրդին դժգոհութիւնը այնքան թոթուեց զմեզ, որ հարկադրուեցանք լայնիւր սոյեմ վազանցնիլ, մեր պոյէն վեր անել այդ գրութեանէն, դարձնել հեշտ, և մեր գրիչը թաթխելով խառնը խաւովսի ջուրին պէս թեթեւ մեղանին մէջ, սկսանք գուարթօրէն տեսակցիլ մեր ընթերցողաց հետ: Եւ կարծեմ թէ գոհ մնացին զմեզ չեղեցնողները, քանի որ կրօնամատասիրական հանդէս մը չէր մերը՝ այլ...

Փեարվարը, որ ամիսներուն կրտսերագոյնն է, իր անառակութիւնները սկսած է արդէն չաբաթէ մը ի վեր, և որ պիտի տեւէ մինչեւ մօռմօռօզ: Եւ պէտք է ըսել թէ քարեկենդանի այս եռուղեւ խրախճանութեանց օրերուն չէ՛ք սպասեր որ կրօնական ակնածանքի, հաւատքի ամուրուքեան պէս նիւթերու վրայօք ճառենք, քանի որ մեր առջեւ ահագին Օր մեծ պահոցներ ունինք, որոնք այդ կարգի յօդուածներու և լրջագոյն գաւառային թղթակցութեանց կը վերապահուին միշտ:

Հիմա անցնինք օրուան նիւթին և նորոյթին:

Պարահանդէս գացած էք, կամ գտնուած էք պարահանդէս ըսուած հանրերեկոյթին, ուր ծանօթը անծանօթ կըլլայ, անծանօթը սերտ ծանօթ, ուր մայրը զաւակը կուրանայ, և զաւակը որ Բիռօնի պէս ան հարմար կը

գտնուի հող, և վերջապէս վայր մը՝ ուր զոժողք և արքայութիւն զիրար կը հալածեն, հարաւային և հիւսիսային հովերուն պէս, ըսէ՛ք, գացած էք հող:

Այդ կարգի չէն շող սրահներու դրամագլուխը կեղծիքն է, իսկ գործիքը՝ դիմակը:

Ամէն մարդ ծածկուած է հող, ամէն ոք ծպտուած: Բնչուի ջլթիկ տարազին տակ կա՝ ընկի է ձեր մօտ մէկ ազգականը պահուած ըլլայ. սեւ սատանայի մը քօսթիւմով դըպրապետ մը՝ հուպիտի շուայտ հանդերձներուն ներքեւ ..., վարժապետ մը՝ ծաղկեղանակ պարզ բէշերուն տակ, չամաչըրճի մը՝ արեւդայի մը սեւ տօմինօին տակ, չորրորդ անգամ նշանը ետ ընող մը et ainsi de suite: Կը տեսնա՞ք որ դիմակը ի՞նչպէս կը փոխէ անձերը և թոյլ կուտայ ... սանձերը:

Ասոնք տարւոյն չփացած, gatté ամսուան կեղծիքներն են, որոնք բարեկեցիկ անուանով կը ճանչցուին, և որոնցմէ է՛ն արտառօցն անգամ ներքի կըլլայ: Բայց ...: Revenons à nos moutons:

Մարտէն մինչեւ Յունվարի վերջը չէ՛ք հաւատար երբ յիշեմ ձեզ թէ՛ նոյն դիմակաւորները, նոյն քօսթիւմները, նոյն ծպտեալները ամէն օր ամէն ժամ ամէն վայրկեան ձեր շուրջը կը դառնան, և դուք ձեր հեռատեսի աչքերով՝ և կամ concave ակնոցով նոյն իսկ չէք կրնար տեսնել, նշմարել:

Սկսինք գրական կեղծիքէն:

— Mon cher! հիանալի էր վերջին գըրածնիդ, կրնամ ըսել թէ՛ նոյնչափ չիք հատուած մը երբէք կարդացած չէի ... կը չընորհաւորեմ:

Նոյն անձնաւորութիւնը ուրիշի մը:

— Կարդացի՞ր X ին վերջին գրուածը... ասանկ զուգուակ, ասանկ խայտառակ յօդուած ... Աստուած իմ, ինչպէ՛ս չեն ամբշնար ստորագրելու ...:

Առեւտուրի աշխարհին մէջ:

— Հաւատայ խօսքիս, անցեալ օր կըրկին տեսայ զինքը և յորդորեցի որպէս զի ամէն բան ձեր մաղաղայէն առնէ, նոյն բանը կը կրկնեմ ուրիշներու ալ ...: Ահա թէ ինչպէս պէտք է մարդ իր բարեկամը սիրէ ... գործքով ...:

Նոյնը ուրիշի մը:

— Ձգէ ախպար առ խաղըխճին, մաղաղային խըթլըխին եկար ... Թէ ապրանքները վարնոց և թէ սուղ ... կոտսուիլ կուգես նէ գնայ, չեմ խառնուիր ...:

Թաղ. Խորհրդարանին մէջ:

— Համակարծիք եմ էֆէնտիին խօսքին, իրաւունք ունի, պէտք է ընդունիլ իր առաջարկը, ի՞նչ ըսել է, ան մենէ աւելի փորձառութիւն ունի, այո՛, այո՛, իրաւունքը ձերն է բարեկամս, արձանագրեցէ՛ք, արձանագրեցէ՛ք ...:

Նոյնը դուրսը:

— Ամա՛ն ... հաւատայ, անգամ մըն ալ անոր խել խօլ կարծիքներուն ականջ կախէք, ընդունիք, հրաժարականս կուտամ, ի՞նչ ըսել է, միշտ անոր խօսքը պիտի ըլլայ, հէմ ի՞նչ ապուղուղի զաղափար է տուածը, մենք հոս խօսեալու՜մի ենք, չօգ չէ՛յ ... խալթ է կերէր ...:

Ընաանկան շրջանակի մէջ:

— Հոգիս ... ա՛խ ... քոյրս ըլլար նէ այնչափ չպիտի սիրէի, չիյտես ի՞նչ տաք սէր մը ունիմ վրադ, հէմ ալ ձայնս հասած տեղը քու բարեմասնութիւններուդ վրայօք կը խօսիմ միշտ, խա՛չ որ ... հաւատայ ...:

Նոյնը ուրիշի մը:

— Բօստալը ..., ի՞նչ սեւ օր սեւ սառաթ է եղեր քի ճանչցեր եմ, ասա՛նկ մուֆասալ, ասա՛նկ բանսարկու, ասա՛նկ չարլիանոս չի կրնար ըլլալ, երեսը կը տեսնամ կոր նէ ջիղերս ոտք կելլան կոր, բայց ի՞նչ ընեմ ... գետինին տակը անցնի ...:

Բարեկամներու միջեւ:

— Բանի՛ տարի է իրար կը ճաննանք, օր մը օրանց իրարու խառնախօսի մը ըսած ենք, հա՛, իշտէ ես ասանկ բարեկամ եմ, հիմա ջուրը նետուէ ըսէ, ճլօ՛նք ... մէջն եմ, անկեղծ եմ անկեղծ ...:

Դուրսը, ուրիշ առթիւ:

— X ը՛ ... մէտէթ Ալլահ ... ո՛ր մէկ գէշութիւնը ըսեմ, ան ալ տեսնուելու մարդ է, աչքիդ մէջը նայի նէ լուսըդ կը գողնայ, ինծի բարեկամ գիտես նէ շատ սըխը ֆըխը մի տեսնուիր հետը, չեմ խառնուիր ...:

Դեռ կուզէ՛ք, շարեմ ...:

Ահա բուն դիմակը, ահա բուն բարեկենդանի ծպտեալները, մասխառանները պէտք

է ըսեմ, որոնք բաց դիմօք, իրենց երեսի կաշիին տակ պահուելու անհրաժեշտ է հարկ տալ, անոնք Նալային պէս են՝ որ օձին շապիկը կրու- նակը անցուց իր ՄԱՐԴԻԸ մոլորեցնելու հա- մար, և անկէ ալ աւելի, քանի որ խաբէու- թեան և կեղծիքի համար ոչինչ կը փոխեն, և միշտ իրենց բնական վիճակին մէջ կը կա- տարեն այնպիսի զազիր արարքներ և քսու- թիւններ, որոնց քառորդը չանցնիր բարե- յենդանի այս դիմակի օրերուն:

Պէտք է ճանչնալ բարեկամները, պէտք է կշռել ծանօթները, ազգականները, և նոյն իսկ եղբայր, քոյր: Եւ ինչպէս պարահան- դէաներու մէջ սովորութիւն է, մինչեւ որ դիմակը չի բացուի՝ բան մը չեն մեծարեր... վրայ չի տալու համար, նոյնը ըրէք ձեր շուր- ջիններուն ալ, նախ անոնց իսկութիւնը սօցե- ըրէք և ապա բացէք ձեր քսակը, ձեր սիրտը:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԻՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՍ

Ո՛հ, երանելի՛, երիցս երանեալ էի այն ատեն: Բայց աւա՛ղ, եղո՛ւկ ինձ և ամենայն հաւատացելոց և կաղաց և կուրաց և գոսա- ցելոց:

Խթման առջի գիշերն էր, հազար հատին վաթսուն փարայ ուզեց. ափսո՛ս, սակար- կութիւնս չյարմարեցաւ: Գոնէ՛ չիշէ խավա- նողները պատրաստած չըլլայի: Ոմանք՝ եպեմ կիւմեհին պերապիր է ըսին, այլք՝ սալլան- կեօզին էղմէն յանձնարարեցին, և տակաւին ուրիշներ՝ առարկեցին որ՝ թուէնը 18ը հինգ անցած կը մեկնի:

Ո՛հ, ո՛հ, ա՛խ, վա՛խ. — Խաւարասա- ռոց և կորաքամակ աչքերս՝ եօղուռտին քնասէին հետ՝ պատասառօք ու երիզապնդօք հետեւեցոս անոր... այո՛, մինչեւ Պայրամ- Փաշա ետեւէս եկան ու ետ դարձան:

Հոսեցէ՛ք ուրեմն, ո՛վ աղի և պղպեղի արցունքներ, այո՛, խռպաներ լեցուցէք: Իսկ դուք, ո՛վ իմ պանծավեհ քթի թէփէլէմէ աղբերակներս. դո՛ւրս թափեցէք ձեր մեղ- քածորան պարունակութիւնը: Եւ դուք, օ՛հ,

ո՛հ, թաշկինակ հասուցէ՛ք, չամաչը՛ր փոխե- ցէ՛ք, փիւռկաթիֆ առէ՛ք:

Ա՛հ, ի՛նչ կ'ըսեմ, եթերային և ըթրոային բազկաթոռի մը մէջ ընկողմանած, կ'զգամ թէ աննիւթական էակներ՝ ոտքերս կը լուան. եղունգներս կը կտրեն և... մատամփօլէ պսակներով ու ետփըշխանէ պատմուճանով կը զարդարեն զիս: Ո՛վ զեփիւռ, ո՛վ վարդ, ո՛վ սոխակ, ո՛վ իմին խառթօփիի պէս բամ- պուխս, թօմպուլիկ ձագուկներուդ կէտա- նին փիթէներ քթուեմ:

Օ՛հ, բիւֆ, ա՛խ, օ՛ֆ. — Այո՛, էմին- էօնիւն բազկատարած է, զարզամաթը խըթ է աս տարի, ուսկուճի սկառասին լէմոնի պէտք ունի, ով դու եռմուռճախ բնեմօնի:

Ա՛խ, վա՛խ, օ՛ֆ, ամա՛ն. — Այո՛, և այո՛, ջրակապոյտ ծփծփանք, վէտվէտուն գլգլեակ, սիսեռախոով հեծեծանք, կը՛տ, կը՛տ, կը՛տ... կըտկըտա՛՛՛ք:

Եւ ահա, ո՛վ դժոխքդ դժոխոց, երան- եալ է այր, որ այր է: Ի՛նչ կ'ըսեմ, ո՛չ ա- պաքէն գրեալ է թէ՛ քէօփէք մէմէսին պիւֆթէքը գերահրաճաշակ կ'ըլլայ, տըզ- ըուկին եահնին՝ անմահական, իսկ սողու- ճան տօլմասին՝ մեծահամբաւ է՝ իբրեւ չքնաղ մէղէ մասթիքայի:

Ա՛խ, օ՛ֆ, բիւֆ. — Այո՛, անմահու- թեան այն օթեւանն, ո՛վ դու ընտրեալդ, Յիսնակին պահքին էր, բազմավաստակ և համեստունակ, ի՛նչ կ'ըսեմ. քու դազաղիդ շուրջը, Չիֆթէ-հավուզներուն եզերքը և Մակ քարին այագման:

Օ՛հ, ո՛հ. — Յուսածիծաղ դու վեհա- պանծ արշալոյս՝ որ վկայ ես անկաշառ՝ թէ ի՛նչպէս կը լուսցնէի գիշերները և խանվա- թըն միասին կ'ընէինք: Յիշե՛ս արդեօք:

Ա՛հ, անոր սքառքինին էօքճէն էր որ իբ- րեւ մանեակ կը կախէիր, իսկ ես, ա՛խ, ա՛հ, ո՛հ, միտիաի կեղեւներուն վրայ տանջակո- տոր՝ ստուերամած խափուսխային շոգիովը արբշիռ՝ Մայր-Հաշիւս կը գրէի:

Աւա՛ղ, ափսո՛ս, եղո՛ւկ, ը՛հ, մը՛հ: Ո՛վ եթեր, ո՛վ լուսին, ո՛վ կէճէ սէֆա, ո՛վ իմ էքճէքճիւս չէթէլէն, ո՛վ զեփիւռ, այո՛, ի՛նչ կ'ըսեմ, ի՛նչ կ'ըսես, ի՛նչ կ'ըսէ: Ամէն:

ՏԻՇԼԷԿ

Մեր համակրելի երգիծարան-կատակերգակը Ե. Թօլստյանն որ, սրտից էր բարեկենդանի եղանակին մէջ գրելը մեկն էր չիթել՝ Մեծ պահքի առաջին շաբաթէն սկսելու համար իր միմոսաբանութիւններուն, այս շաբաթու բացառաբար Հանրագիտակի համար կը խզէ պահ մը իր երգումը և կը դրկէ մեղի Կալուօսապուտում մը, Թօլստյան մէկ նոր վերնագիրը՝ որուն ներքեւ չենք գիտեր ի՞նչ պիտի արտադրէ մեր անպէս ուշ-խառակիցը:

Անցած օր Ամբակում կը հարցնէր Ե. Թօլստյանի.

— Աղբա՛ր, ինչո՞ւ չես գրեր կոր սա՛ միջոցիս:

— Հիմակուհիմա փարսլի պէտք չունիմ, պատասխանեց մեր ժողովրդական միմոսը:

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

ԱՐԻՄԳԻՅՑ ՄՈՒՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գեղարուեստներու մենաշնորհուած սեփականութիւնը ըրած ենք մուրացիկութիւնը և չենք քաշուիլ ամենեւին հանրային գթութեան դիմելու, իբր թէ ասիկա մեր արդար վաստակը եղած ըլլար:

Երբ դարբին մը, ատաղձագործ մը, պանքայի գրագիր մը կամ նպարավաճառ մը, բաղդին մէկ անհամ կատակովը, ելլեն մուրալ, փոխանակ խղճալու՝ այպանելու շարժառիթ մը կը գտնենք և շատ հազուադիւրէն որ ամբերին տասնոց մը դնենք, եթէ տեսնող մը չկայ:

Բայց, բաւական է որ մուրացողը գրագէտ մը ըլլայ, դերասան մը, նկարիչ մը, վարժապետ մը կամ նոյն իսկ գրաշար մը կամ թատրոնի փեթեֆէթի մը, և ահա՛ անմիջապէս մեր բոլոր համակրութիւնները գրաւուած են կանխաւ:

Կրնան ճակատաբաց մուրալ անոնք, իբր թէ փաթեքնալը մուրացկաններ ըլլային:

Անոնց մուրացկանութիւնը կը ծափահարենք, բանաստեղծական գոյներ կուտանք, կ'աստուածացնենք անոնց ըրածը և կը դատապարտենք մեզի համամիտ չեղողները:

* * *

Անգամ մը Եղիա ժամու մը դուռը մուրաց: Եւ ասիկա բաւական եղաւ՝ ամբողջ գըրականութիւն մը ստեղծելու համար ասոր շուրջը, մինչ ամէն օր սո՛նչափ մուրացիկներ ճշմարտապէս կը մուրան ժամերուն դուռը և ո՛չ մէկուն միտքէն կ'անցնի տասնոց մը դնել անոնց ամիսը:

Եւ ո՛չ մէկուն միտքէն կ'անցնի տասնոց մը դնել անոնց ամիսը:

Տարբերութիւնը որ կայ Եղիայէն ու ասոնց միջեւ, ա՛յն է որ Եղիային ըրածը լո՛կ և սոսկ քաբոխ էր, մինչդեռ վերջիններուն անկեղծութիւն է:

Գէշը հոն է որ մենք ալ քաբոխիք ենք և Եղիային ըրածը հօգ կը թուի աչքերնուս:

Եղիան կը մուրալ կոր...

Գրական յօգուածի ինչ աղւոր վերնագիր, և մենք վերնագիրէ դատ բան չենք մտածեր:

Գրա՛ւ կը դնեմ՝ որ այսօր բանաստեղծ մը հոգի կուտայ անգամ մը Եղիային նման ժամու մը դուռը մուրալու, որպէս զի այս կերպով իր ու իր վարպետին միջեւ գտնուած տարբերութեան վերջին փոքրիկ նշոյլն ալ վերնայ:

* * *

Եթէ մուրացկանութիւնը ամօթ է, ամօ՛թ է հաւասարապէս ատաղձագործին ու գրագէտին, դարբինին ու նկարիչին, գրագիրին ու դերասանին համար ալ:

Արժանապատուութեան նուաստացում մը ցոյց կուտայ մուրացկանութիւնը, և արուեստագէտը՝ որուն քով արժանապատուութիւնը է՛ն բարձր պէտք է ըլլայ, արհեստաւորէն շատ աւելի գժուծ բան մը կ'ընէ մուրալով:

Սակայն, մենք սովոր ենք արուեստագէտին կողմը տալ և հանրային գթութեան արժանանալու իրաւունք մը չնորհիլ անոր, որովհետեւ «անիկա իր կեանքին մէջ իր հո-

գիտէ՛ն ալ բան մը տուած է մեզի», — ըստ յաւիտենական բլիթի:

Պօ'ւ լաճեր:

Երբ դերասանը զիս կը խնդացնէ կամ կը չափնէ, իր այս իշխիւզարութեանը փոխարէն օթեակին համար ոսկի մը, թիկնաթուին՝ 20 և մուտքին՝ 5 զրուշ կ'առնէ ինէ՛ և երբեմն եթէ պատահի որ ձրիօրէն դիտենք դերասան մը, ասիկա լոկ մեր աներեսութեան արդիւնքն է:

Երբ նկարիչ մը գեղեցիկ քապլօններ չինէ, երբէք չի յօժարիր ձրիօրէն տալ զանոնք՝ սպօնս դարդարելու համար:

Վերջապէս, ամէն անգամ որ Վահան փափագեան կը փափաքի իմ ձեռագիրիս երեսը տեսնել, նախ և առաջ իր ցրուիչին միջոցաւ հինգնոց (ոսկինոց և ո՛չ զրուշնոց) պանքտոմս մը կը զրկէ ինծի:

Արդ, ինչ իրաւունքով արուեստագէտը հանրային գթութեան արժանանալու իրաւունքը ունենալ, երկաթագործէն կամ ատաղձագործէն աւելի:

Այնչափ ատեն որ Զափրաստ ունէր իր տաղանդը և իր կորովը, ինէ ձենէ աւելի փարա կը վաստկէր:

Երբ տաղանդն ու կորովը պակսեցաւ, թշուառ եղաւ և այն ատեն:

Նո՛յնը՝ ատաղձագործին, երկաթագործին, դարբինին ու նաւավարին համար, եթէ իրենց երիտասարդութեան միջոցին քիչ մը խնայողութիւն չեն ըրած:

* * *

Օգնե՛նք ինկածներուն, բայց ո՛չ որովհետեւ այսինչը ժամանակին մեզի խնդացուց կամ որովհետեւ անիկա ատենօք գեղեցիկ նորավէպ մը գրած է:

Մուրացկանութիւնը չ'իտէալացնենք:

Հաւատացէ՛ք որ երբ վաղը ելլեմ մուրալու, ասիկա լո՛կ իմ անխոհմութեանս արդիւնքն է և անխելքութեանս հետեւանքը, և ասոր մէջ ամենեւին գործ չունին համայնքին ապերախտութիւնը կամ մարդոց անտարբերութիւնը:

Ժամանակակիցներս լիովին կուտան ինծի ա՛յն՝ որուն արժանի եմ, և եթէ աւելին չեն տար՝ ասիկա ձիշդ անոր համար է որ ... աւելի չեմ արժեր:

Աստուածնիդ սիրեք, ինչո՞ւ այնչափ մեղքնամ Զափրաստը:

Եթէ դերասան չըլլար, միթէ պանքէրութի՛ւն պիտի ընէր:

~~~~~

«Ա.Ղ.ՋԻԿՍ ԵՌԻՆԻՆ ԿՈՒՏԱՄ»

(99 1/2 առ 100 վաւերական)

Տեսարանը կ'անցնի Ատա-Բազար, ուր Հանրագիտակ 1025 ընթերցող ունի և 7677... օրլախնի:

Քաղաքին Հայ երիտասարդութեան մէկը — զոր անուանենք Պ. Արտաշ — օրին մէկը կը հանդիպի քաղաքին ջոջերէն մէկուն դրստի (ինչ աններդաշնակ բառ՝ օրիորդի մը համար), — զոր Օր. Վարդանուշ անուանենք իր կարգին, եթէ այս անունով ծանօթներ չունիք Ատա-Բազարում —:

Պ. Արտաշի և Օր. Վարդանուշի նայուածքները իրարու կը բաղխին, և որովհետեւ ամէն բաղխումէ լոյս մը կը ծնի անպատճառ՝ Աղամ Եւայէ ի վեր, Արտաշին ու Վարդանուշին աչքերէն ծաթած Լոյսն ալ (գրական ու գեղարուեստական չաքաթաթերթ պատկերազարդ) շանթ մը կ'ըլլայ և առ ի չըգոյէ շանթարգելի մը, երկուքը մէկանց կը շանթահարուին հոն:

Մարքոնիէն շատ առաջ հնարուած անթել հեռագիրը՝ Ժպիտը՝ Օր. Վարդանուշին միտքէն անցածը կ'ըսէ Պ. Արտաշին, որ կը մենախօսէ.

— Աս աղջիկը ինծի զարնուեցաւ:

\* \* \*

Ինչո՞ւ արդեօք երբ աղջկան մը երեսին խնդալը նշմարենք, անմիջապէս կ'եղրակացնենք որ մեզի զարնուեցաւ:

Անգո՛ւթ առեղծուած մարդկային ապուշութեան:

\* \* \*

Ու Պ. Արտաշ առանց երկար բարակ վարանելու, կ'երթայ չիտակ գտնել իր Ատա-Բազարցի Տիւլսինէին հայրիկը:

— Տէ՛ր, կ'ըսէ անոր, Տերոջ հրամանովը ձեր աղջկան ձեռքը կը խնդրեմ:

— Շատ ուրախ եմ, կը պատասխանէ աղջկան հայրը՝ առանց իր ուրախութեան

պատճառը յայտնելու, բայց ի սրտէ կը յայտարարեմ որ չէք կրնար իմ աղջկանս ամուսինը ըլլալ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ կիրակի օրերը երբէք ժողովարան չէք երթար կոր աղօթելու և Տիրոջ խօսքը իմանալու:

— Բայց ձեր աղջիկը կը սիրէ զիս:

— Ատիկա իմ գիտնալիք բանս չէ:

— Ներեցէ՛ք ...

Բայց մարդուն համբերութիւնը կը հատնի ա՛լ:

— Ինծի նայէ՛, կը պողայ վերջապէս, աղջիկս սօխախին շունին կուտամ, քեզի չեմ տար:

Պ. Արտաշ պահ մը կը խորհի Ամասիացի վարժապետին նման հա՛յրն ալ սպաննէ, աղջի՛կն ալ, և յետոյ ինքզինքը ...:

Բայց, երեքին ալ կը մեղքնայ, մանաւանդ ... ինքզինքին:

Ու կ'որոշէ տարբեր կերպով վրէժը լուծել:

\* \* \*

Երբ Վարդանուշին անգութ հայրը հետեւեալ առտու փողոցին դուռը կը բանայ գործին երթալու համար, հոն կապուած կը տեսնէ փողոցի շուն մը, ճիտը օձիք ու փողկապ անցուցած և կռնակը՝ պօնժուռ մը, գլխուն վրայ հետեւեալ գրաւթը ծանօթութիւնը կրող:

«Ահա՛ ես եմ փողոցին տուեր, աղջիկդ ինձի տը՛ր»:

\* \* \*

Ահա՛ ո՛ւր կը բնակի սրամտութիւնը՝ Ատա-Բազարում:

### ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

### Ձ Ե Կ Ո Յ Յ

Մեր այն բաժանորդներուն՝ որոնց հասցէին բաժնեգնի նորոգութեան և առաքման մասին գրած էինք, կը խնդրենք որ հաճին զրկել փոխարժէքը, որպէս զի շարունակենք թերթերը:

### Մ Ե Ղ Ք Է Ն Ա Ռ Ա Ջ

Ա.

Դեռ մեղքը գործուած չէր:

Տիպար Ամուր, առաջին զոյգը, իր անմեղութիւնը և մերկութիւնը կը պտտեցնէր եղբմին ընդարձակութեան մէջ:

Աղամ և Եւա, որ բամբասուելէ չէին վախնար, գողտրիկ, յանձանքին ծրագրերը կը պատրաստէին, հովանոտ ծառերու շուքին տակ:

×

Մայիսի առտու մըն էր:

Նախամարդը լճակի մը եզերքը ընկողմանած, Տիրի անուշութեան մէջ կը մոռնար կեանքի դառնութիւնները:

Միջոց մը Եւա ոտքի վրայ ելաւ, մազերը շտկելու համար:

Դեղանի էր նա, ինչպէս երբէք կին մը չէ եղած:

×

Սատանան հեռուէն կը դիտէր զանոնք:

Պանանայի ծառի մը քովին էին Նա և Նէ:

— Աստուծմէ ետքը, տեսածներուս մէջ՝ Դուն ամէնէն գեղեցիկն ես, ըսաւ Աղամ Եւային:

×

Շիկնեցաւ Եւա և իր ամօթը ու գոհուանկութիւնը յայտնի չընելու համար, այդ լայն տերեւներէն հատ մը բրցուց և անոր ետին ապաստանեց իր ժպտուն դէմքը:

×

Այդ օրէն ի վեր կիները ընդունեցին հողմահարին գործածութիւնը:

Բ.

### Մ Ե Ղ Ք Է Ն Ե Տ Ք Ը

Տեսարանը կը ներկայացնէ գիւղիցեան ծառ, որուն կոնդին սակ նսած եմ:

ԱԴԱՄ՝ հագուած՝ ինչպէս ձուկերը ծովուն մէջ:

ԵԻԱ՝ օդը սալ բլլալուն, շապիկն անգամ հագած է, երկուքին վրայ ալ յոգնութեան եւ վախի նշաններ կան ...

ՁԱՅՆ ՄԸ՝ ՎԵՐԵՆ:

ԵԻԱ. — Է՛յ, հիմա՛յ ...

ԱԴԱՄ. — Ալ ինչ կուզէ թող ըլլայ:

ԵՒԱ. — Սիրտս թրփ թրփ կը նետէ կոր, խըյանէթ, ատ ինչ փորձանք է գլխուս բերի:

ԱԴԱՄ. — Ալ եղաւ, կայնէ նայինք, հարցունէ նէ բան մը ուշադրութիւն կընեմ:

ԵՒԱ. — Ինչպէս ալ խօսքերուդ խառնուեցայ...: Խելօքիկ հանգիստ կերպով կերթայինք կոր, ուղածիդ չափ կեր խմէ, ամէն բան ձրի, աղուոր օդ, պատուական ջուր, սոխակներուն նուազահանդէսը, պղպուղներուն լուսավառութիւնը, ծաղիկներուն բոյրը, երկինքի պայծառութիւնը և ասոնցմէ վեր՝ արտի կատարեալ հանգստութիւն մը...:

ԱԴԱՄ. — Եւ ատորմէ ալ վեր՝ աչքերուդ ցոլացումը, այտերուդ թաւշեայ կարմրութիւնը, ակունքներուդ մարգարտեայ շարքը, մազերուդ դեղձան աղւորութիւնը, ուսերուդ զգլխի յղկութիւնը, կուրծքիդ...:

ԵՒԱ. — Ինչ նորէն...:

ԱԴԱՄ. — Qui a bu boira, ma chere կ'ըսեն ֆրանսացիները, ինչպէս մոռնամ հըմայքը...:

ՁԱՅՆ ՄԸ. — (Այն Էթեսով՝ որով պանգուխս քահանաները կողբեցին «Պատեա Տէր զայնոսիկ» բ): Պարոն Ադամ, Պարոն Ադամ:

ԵՒԱ. — Ոտքդ պազնեմ, հիմա կը մարմ:

ԱԴԱՄ. — (Շփոթած և դողալով) համայէ՛:

ՁԱՅՆԸ. — Հոս եկուր տեսնենք, ես ձեզի չըսի՞ որ այդ ծառին պտուղէն չուտէք:

ԱԴԱՄ և ԵՒԱ. — (Գլխիկոր գետին կը նային եւ պատասխան մը չեն գտնէր):

ՁԱՅՆԸ. — Քանի որ խօսքս չի բռնեցիք և անհնազանդ գտնուեցաք պատուէրիս, իրեւ պատիժ ձեր անկարգապահութեան այստեղ կը դատապարտեմ զձեզ Եւա, առանց քորէի դուրս չի կրնալ ելլելու: (Եւ Ադամին դառնալով) զքեզ ալ, անառա՛կ, կը դատապարտեմ կարծր կերպով արդուկուած շապիկիդ օձիքին կոծակը քու ձեռքովդ կոծակելու, երկուքդ միասին, այս վայրկեանէն կը հրամայեմ զբախտը ձեզի երթալու, որովհետեւ... ուրիշին վարձու պիտի տամ:

Յ. ԱԼՓԻԱՐ

## ԲԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ !!!

Ահա՛ գրականութեան երկրորդ անմշակ գետինը, որուն առաջին աշխատաւորը եղաւ Զօլա, և իր հետեւորդները եղան մեր մէջ՝ Բրիզանթէմ, Լիլա, Կալուօշ և ուրիշներ: «Ռուկօն-Մաքառ»-ի հեղինակը խստիւ քննադատուեցաւ իր գաղափարներուն մերկապարանոց յայտնութեան դէմ, շատեր իրր անբարոյ անձ մը նկատեցին զայն, բայց ան միշտ յամառեցաւ և իր համոզման մէջ անվերդով՝ յաջողեցաւ:

Գալով ինձ, ստուգիւ կ'ըսեմ թէ ամէնէն սիրած՝ յարգած՝ պաշտած՝ բանս... բացն է... գրականութեան մէջ: Որչափ ախորժակով կը կարդամ «Լիլա»ն, «Ալփիար»ը, այնքան ջիղերս ոտք կ'ելլան Ե. Արմէնի գրուածքներէն: Վերջապէս միշտ կը փրնտում ուրախը, զուարթը, և հեռի կը փախչիմ տխուրէն, և արդէն ո՛վ այնպէս չէ: Ես ալ ուխտած եմ և ուխտեցի յետ այսորիկ (վա՛յ, Մասիսի խմբագրապետին դէմքը դիտելու արժանի է) բաց գրել յարգելի բարեկամներուս նման, բայց շատ պիտի չի բացուիմ... քանի որ միտք չ'ունիմ ստուելու ձմրան այս սաստիկ օդերում, իսկ եթէ ամառը գայ՝ խնդիրը կը տարբերի, ապահով եմ որ զիս ալ պիտի պախարակեն, ինձ ալ պիտի չի հաւնին, բայց... միշտ հաճոյքով պիտի կարդան: Հոս պզտիկ անեքօք մը եթէ կը հաճիք:

Անցեալ օր ընտանեաց հայր մը կ'ըսէր. «Խալա՛ր, պու Լիլա տա արթըզ հիչ ութանմայօր, շունըն եազտըզլարընա պագ», բայց յաջորդ շաբթու՝ լրագրավաճառը ճամբու կը դնէր, գիտէք ինչո՞ւ, Հանգիստակը սպառած ըլլալով՝ քովը չի գտնուելուն համար: (Հո՞ս ես Լիլա):

Բայց ես բաց գրողներու վրայ ունիմ... առաւելութիւն մը, այն է թէ անոնք որչափ ծածկուին՝ այնքան ծանօթ են հանրութեան, իսկ ես, միայն ծանօթ... ինձ և խմբագրապետիս: Ինձ համար գիտեմ թէ պիտի ըսեն. «Ծօ՛ պո՛ւ քիմ տիր, պո՛ւ նէրէտէն չըգտը», բայց ես միշտ պիտի պահուըտիմ «Միօգօրիս»-ի համեստ թերթիկներուն տակ, և երբ օր մը... պատահամբ, Զօլաի պէս

աճիւններս Բանթէօն փոխադրուիլը քուէարկուի, և ո՛վ ըլլալս ուզուի հասկցուիլ, թող դիմեն սիրելի խմբագրապետիս, որ քիթքի պահաւորի քեզած տարիքի մը մէջ ըլլալով՝ (այս կը մաղթեմ իրեն) բնականաբար պիտի չի կարենայ յիշել, և ես պիտի մնամ յաւիտեան Հանրագիտակի անառակ որդին:

Ուրեմն յաջորդիւ խնկարկութիւնը իմ կողմանէ:

### ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ

Ո՛ր եւ է ներկայացման, մանաւանդ նըպաստի յաջորդ օրը, թերթերը մեծաւ մասամբ դրուատիքը կը հիւսեն մեր դերասաններուն առանց բացառութեան: Անոնց մէջ շատ ցանցաւ հանդիպած ենք քննադատականի մը, որ մատնանչէ այս ինչ կամ այն ինչ արուեստագէտին բեմական կարողութիւնը, առաւելութիւնը կամ թերութիւնը: Եւ սակայն եթէ կ'ուզենք ունենալ առաջնակարգ դերասաններ և ուհիներ, պէտք է երբէք այդքան գովասանք չուայել՝ դիտելէ և տեսնելէ վերջ անոնց պակասութիւնները: Եթէ կ'ընդունինք թէ, քննադատութիւնը՝ մեծ օտար կը հանդիսանայ յառաջդիմութեան, պէտք է քիթքի ընել զանոնք, պէտք է ցոյց տալ իրենց այս ինչ կամ այն ինչ բիւսին մէջ ստանձնած օրին՝ յաջող կամ ո՛չ կողմերը — եթէ ունին բնականաբար —: Շատ արդարացի կերպով քննադատուած են Ժամանակին՝ Աղամուսներ, Արահամանցներ, Աստղիկներ, Հրաչեաններ, Մնակեաններ, Մաղաքեաններ, որոնց շնորհիւ անոնք հասած են իրենց որոշ բարձրութեան: Հաւասարապէս քիթքիք եղած են ատենօք՝ Սարա Պեռնառ, Փօփրիկն, Ասկիմա Բադդի եւլն. մինչդեռ մենք կը բաւականանանք. Մնակեան՝ գերազանց, Ալիքսանեան՝ իսկ, Պիննէմէճեան՝ հիանալի, Չօպանեան՝ սանկ, Շահինեան՝ նանկ եւլն. ըսելով:

Ո՛վ չի կարդաց Թէոդիկի Տարեցոյցին մէջ՝ Աստղիկ քրոջ՝ Սիրանոյշի ունեցած այն հոգեկան տաքնապը, երբ առաջին անգամ ըլլալով կը ձեռնարկեր բեմ հանելու Շէյքսպիրի Ժանօթ թատրերգութիւնը: Բանի գիշերներ լուսցուցած է նա, չորս բառերէ կազմուած

սա խօսքերը կարենալ արտաբերելու. «to be or not to be» և ինչո՞ւ բոլոր այս ամէնը, ինչո՞ւ այսքան տքնութիւն, ինչո՞ւ այսչափ երկիւղ: Որովհետեւ հոն կայ քիթքիք անաչառ, հաւասարապէս ո՛վ որ ալ ըլլայ ենթական:

Մեր դերասաններուն շուրջուած քիչ արդար գովասանքները արժանի է դիտել թէ՛ որչափ ծիծաղելի հետեւանքներ կ'ունենան: Ահա այսպէս՝ դերասանը, ինչպէս ամէն մարդ, շատ լաւ գիտակից է իր կատարած օրին յաջող կամ ո՛չ ըլլալուն, և համարելով թէ անյաջող ձախողութեան ենթարկուի, ինչ մեծ է իր զարմանքը՝ երբ յաջորդ օրը մենք իր ներքողը կը հիւսենք թերթերու մէջ, մեր գնահատական կարողութեան վրայ: Ինչ մական կեանքը ուսումնասիրող և անկէ հասկըցողի փետուրներով զարդարուած ենք, սակայն հարկ է ըսել թէ՛ դժբաղդաբար շատ հեռի ենք այդ վայելքը ունենալէ:

Մնակեան հայր, ինչ ներողամիտ կը գըտնուի կարծեմ, եթէ այս առթիւ կուգամ իր անդամներէն մէկ քանիներուն ունեցած փոքրիկ թերութիւնները մատնանչել: Դերակատարին անունը հարկ չի կայ հոս յայտնել, այլ սակայն A bon entendeur salut: Սիրային դժբախտութիւններ, ընտանեկան վիշտեր, վերջապէս հոգեկան ամէն տաքնապ, յուզելով սիրտը կը նուաղի, ենթական շատ naturel մանաւանդ այդ պահուն, արտայայտած սրտի բարախումները ելեւէջներու, սակայն երբէք ներելի չէ նուաղելէ վերջ յանկարծակի աթոռին վրայէն ելլել կանգնել, ինչ որ ալ ըլլայ այն հակահարուածը որ կը ստիպէ ձեզ աչքերնիդ բանալու, ձեր սթափումը պէտք է առնուազն երկու երեք վայրկեան տեւէ նոյն յոյգերով աուգուն, չէ՞ մի որ բնականը կեղծելու մէջ կը կայանայ ձեր արուեստը, դիտեցէք նուաղածները:

Սիրահարութեան համար հարկ եղած բոլոր ձիւրքերով օժտած է ձեզ բնութիւնը, ինչո՞ւ չեմ հասկնար ձեր Դերասանապետը չէ կարող օժտել զձեզ ... արուեստով: Շատ աշխատեցէք և կրնաք ... մի օր յաջողիլ և ըլլալ ... եթէ Աստուած երկարէ Պապա Մնակին կեանքին թելերը:

Փոքրիկ դիտողութիւն մըն ալ և վեր-

Ջաջնենք սիրելի Մնակ, ինչո՞ւ բիէսներու մէջ լեզուի այդ միօրինակութիւնը, ինչ է պատճառը որ եկիզեօր մը նոյն գեղեցիկ լեզուով, ոճով, դարձուածքներով կը խօսի, ինչպէս օճիկ կամ օճիկեմ մը, Հաճեցէք խնդրեմ այս մասին երկտողով մը (Հանրագիտակի մէջ) լուսարանել Հրաչեայի սանը՝

ՄԻՕԶՕԹԻՍ

## ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ...

Ինչո՞ւ կիներուն « գեղեցիկ սեռ » կ'ըսեն եւ այրերուն « սգեղ », միքէ կանանց մեզ *սգեղ*՝ եւ արանց մեզ ալ *գեղեցիկներ* չկա՞ն։ Ինչո՞ւ հիմակուան կիներուն մեծամասնութեան ներքին թուալէթը՝ արտաքինէն աւելի խնամուած է։ (Անանկ կ'ըսեն, ես չեմ գիտեր)։

Ինչո՞ւ օրիորդի մը կամ սիկիւնի մը երէ « այսօր աղուորցեր ես » ըսես կը արժնի։

Ինչո՞ւ այրի կիները կը բամբասուին ամենէն շատ։

Ինչո՞ւ ամուրիութեան ժամանակ աղուոր... ունիներու հետ սիրաբանող երիտասարդները, վերջը զգեղներու հետ կ'ամուսնանան։

Ինչո՞ւ փառնէն փառն եւ հինգ տարեկան օրիորդները, պէպէտքերուն վրայ կը խեղդեցան։

Ինչո՞ւ « կարգուիմ նե շիւման աղջիկ պիտի չառնեմ » ըսողները՝ վերջը մէկ շապասներ իրենց կին կ'ընտրեն։

Ինչո՞ւ Հայ-Լայն հայուհիները եկեղեցի երթալը իրենց սեպուի պարսկանութիւններէն մին չեն նկատուիր։ Արդեօք կը վախճան թէ՛ գլուխին խանձի՞ կ'իյնայ։

Ինչո՞ւ հայ Բերացունիները շաքարաթերք մը տեսածուն պէս « Նազարեանը յոդուած ունի՞ » կը հարցնեն։

Ինչո՞ւ տասն եւ հինգ օրն անգամ մը, հինգշաբթի օրուան « Մանգումե »ն ձեռնի ձեռն կը խլուի, եւ գրական մարդոցմէն կը կարդացուի ամենէն շատ։

Ինչո՞ւ « Հանրագիտակ »ի մէկ շաբթուան թիւ մը երէ գողցելի Լիլաի անոյշ բոյրը չունենայ, աղէկ ընդունելութիւն չի գտնէ հանրութենէն։ — Հէ՛ ինչո՞ւ։

Ինչո՞ւ օրիորդներու յոդուածները թերթին վերջին էջերում կը հրատարակուին շատ անգամ։

Ինչո՞ւ կարգ մը պօռ խաժա խլեզներ, իրենցմէ թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս բարձր եղող պատշոնակիցներու հետ չափուելու *toupetin* կ'ունենան։

Ինչո՞ւ *sprague* աստիճանները (°) եկեղեցի գալերնուն, անգամ մը կանանց կողմը կը յաճեն նայուածքին եւ յետոյ կրկնաշաղկի (°) կը հագնին։ (Սակայն Ռոմանոսը բացառութիւն կը կազմէ)։

Ինչո՞ւ Կրօնական Ժողովը Տիար Արեակ Խաչէքեանը վարդապետ ժողովու չի յօժարի։

Եւ յետոյ... Ինչո՞ւ կարգ մը ինձի պէս Վիժիւմներ՝ ??? (բա Ջազաի) իմեններէն շաղկի մը վեր շաղկի մը վար գրութիւններ արտադրող փոքրիկներ (բա Ալիփարի) իրենց գրագէտ? Ըլլալուն յաւակնութիւնն ունին։

ՎԱՀՐԱՄ ՍԸՎԱՃԵԱՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԵՐԱՆՈՒԹԻՒՆ

### ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԹԻԻ

ԲՐԲԻՋ, ՄԻՄԱՂ ՈՒ ԺՊԻՏ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ՓԱՐԱՀԱՆԴԵՍ

PARÉE ET MASQUÉ

ԳԱ՛Լ ՇԱԲԹՈՒ, ԳԱ՛Լ ՇԱԲԹՈՒ

- Կալոս'չ, գալ շաբթու Բարեկենդանէ։
- Հրամանը ես, Լիլա։
- Ինչ պիտի ընենք։
- Դու գիտես, Տէ՛ր։
- Մանաւոր թիւ մը հանենք։
- Խեղբիդ մարիմ, Լիլա։
- Մանաւոր թիւ մը, ուր բոլոր միմուսութիւններդ կը թափես դուն։
- Հապա դո՞ւն։
- Ես ալ բոլոր Լիլայութիւններս։
- Օ՛ն ուրեմն։

## ՍԱԼՕՆԻ ԿԵԱՆՔԷՆ

[Ֆ Ա Ն Թ Է Զ Ի]

Լոյսերու մէջ ողորուն տունը լեցուն է հիմակ,  
Շի՛ք պննազարդ *սամերով*՝ բոլորը բաց անդիմակ,  
Որոնց աչքերն պլպլան, կուրծքեր կառնեն ելեւեջ,  
Ոսկէն առաջ սերն է որ պար բռնած է իրենց մէջ:

Cavalierներն en tenu, ձեռներնին ալ նուրբ ganté,  
Կարծես մէկ մօր են զաւակ՝ սերս եղբայրներ եւ կամ քե՛  
Շի՛ք փեսաներ բոլորն ալ՝ հազած պօքեր նոր siré.  
Բայց սեւ օձեր են գիտցե՛ք անոր համար՝ որ սիրէ:

Դաւեմամուրը կը գողայ, սեւ սեւ օձեր եռանկիւն,  
Հիմա ծռի՛ն, խոնարհին ծածկելով միւս չար rancune,  
Յոյժ գեղեցիկ *սամերուն* առջեւը եւ կամ մօքը,  
Քօմբլիմաններ որոնցմէ շուտ կը ծնի ամօքը:

Այրն անդին կծկուած սիկառ fauch անսարքեր,  
Դիտելով մարդ-ալիքը եւ յորձանքը *սարուքեր*,  
Որուն մէջն է իր կինը իր պատիւը son amouree!  
Մինչ cavalierն հետ գիւնով՝ կը դարցնէ սեղմ ամուր:

Հոն անկիւնը մայր մը կայ փառուած նստած հանդարտիկ,  
Հին օրերու ֆօֆոնա՝ քերեւս հազած... բուրդ վարտիք,  
Ապուշ ապուշ կը հրնուի պարող աղջկանն ի տես,  
Որ խոլաբար դարձնէ՝ Monsieur Nico Mavrides:

Պահ մը tournéեն կը դադրի, *սամաներ* կը յամառին  
Պիւճեն երբալ զովանայ. իսկ անոնք որ համ առին  
Սխմառուիկէն, կը պոռան՝ continuez sans arret,  
Cavalierին որ ինքնին պատիւ ծնող սանսար է:

Մքնոյորսք սա՛ք է ալ, գլուխները գերք շոգի,  
Մեկը հոգիս կը գոչէ, միւս մ'առջին կը ջոգի  
Այն աղջկան որ աչքով «*ուկդ եմ*» կըսէ համարձակ,  
Ինչպէս սովոր է ընել, նա որ կոչի *Եւա-ձագ*:

\* \* \*

Առտուան դէմ է հիմա, մոմեր տակաւ կը հալին,  
Մեկը սակայն խել չընէր, չ'անդադառնար իր հալին,  
Քունաս ֆնաս մոմեաներ ալ կը նետուին փողոցը,  
Իրենց արտին փաթթուած հետ տանելով սեր-օձը:

Քերս

ԳԻՄԱԿ

## ՏԱՆՍԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

## ԳԱՀԳԱՀՈՎ ԼԵՑՈՒՆ

Զուկերն անգամ իրենց յատուկ լեզուն և խօսակցութիւնը ունին կրտէ Եւրոպացի հըռ-  
չակաւոր կենդանաբան մը, և այս քսանե-  
րորդ դարուն խուլրուխուլ սուտը կլլելու  
համար չեմ կրնար ստիպել, հաւատայ մի հա-  
ւատար, հաւատացէք մի հաւատաք...  
Արդ քանի որ կրնան կոր խօսիլ քեծալը ու  
ղարպուցեան, ինչո՞ւ չի կարենան խօսիլ՝  
այսինչինն հետ այսինչեան ալ, որոնք եթէ  
ոչ ուրիշ բանով՝ դէթ չնչառութեամբ մի եւ-  
նոյնն են, անոնք ջուրին մէջ, իսկ վերջին-  
ները... սալօնին:

Սալօնի կեանքը և խօսակցութիւնը նկա-  
րագրելու համար ամբողջ կեանք մը վրայ  
տալու է, և պէտք է գիտնաք որ, այդ ստուար  
երկասիրութիւնը, տարիներու այդ աշխա-  
տութիւնը 140,000 հատորներ կրնան լեցնել:  
Եւ որովհետեւ հիմակու հիմա այդ տեսակ  
զօղլու գիրք մը հրապարակ հանելու համար  
զօրլուագոյն հրատարակչական մը չունինք,  
կը բաւականանանք միմիայն ռեզիւմէն ընել  
հոս այն կարգ մը canserionներուն, որոնք  
կանցնին՝ երկու կազ և ութը հոգի աւելի  
գտնուած սենեակներու մէջ, որոնց ՍԱԼՈՆ  
անունը տալու մեղքը կը գործենք միշտ:

Նախ ըսեմ թէ Եկեղեցւոյ մէջ քահանա-  
յին և վարդապետին չըրածը, սալօնին մէջ  
պարզ տիւրիօն մը կարող է ընելու, այն է  
երկու տարբեր սեռերու ներկայացուցիչները  
ի մի ցուլել և... համերաշխաբար, ինչպէս  
կը փափաքի տեսնել մեր սրամիտ քրոնիկա-  
գիրը Դիսոդ:

Պահ մը առաջուան իրարու գլխով պարզ  
բարեւ մը տալով նստող և իրարու բարսախ-  
ներով հեռու անձանթները պարի մէկ թե-  
թեւ սինեալով մը էրիկ-վնիկէ մը աւելի սեր-  
տիւ կը փարին իրարու և մինչեւ որ նուագը  
չի դադրի՝ տաք ջուրով ալ կարելի չըլլար  
թուրխալները թող տալ:

Բարեկենդանի այս եռուղեւ շաբաթնե-

րուն, ինչպէս մեր գրութիւններուն հետեւող-  
ներ կը նշմարեն, ուղեցինք սալօններու և  
պարերու շուրջ քաղել մեր նիւթերը, և ահա  
այս անգամ կընտրենք՝ Տանսերու լեզուն՝  
գահգահով լեցուն, ուր պիտի պարզենք այն  
տաք խօսակցութիւնները՝ որոնք կանցնին  
պարի ժամանակ, քաղալիէներու և տամերու  
միջեւ, և կարծեմ թէ բաւական զրօսեցու-  
ցիչ բերան փոխ մը կըլլայ ընթերցողներուն:

Թէեւ ինքնին պարզ և թեթեւ գտնաք  
այս նիւթը, սակայն պէտք է գիտնաք որ  
չատ մը զոյքեր, որոնք այս օր գաւկի և նոյն  
իսկ թուան տէր եղած են շնորհիւ բօլֆաի  
մը, վալսի մը կամ Բաւոնի մը: Եւ տեսէք  
թէ իրաւունք ունի՞մ թէ ոչ:

\* \* \*

Պէտք է ըսեմ որ՝ գեղեցկութիւնը մեծ  
դեր ունի այս խնդրոյն մէջ, անոնք՝ որոնք  
իրենց գերակշիռ գեղեցկութեան վստահու-  
թիւնը և անոր համարումը ունին, Տանսը  
սկսելէն առաջ, տաք խօսակցութեան մը կը  
բռնուին, և երբէք չեն ցուցնէր թէ պարելու  
հոգի կուտան, իսկ ընդհակառակը, անոնք՝  
որոնց ներկայութիւնը բընաբնաի պէս լեղի  
ազդեցութիւն մը ունի ներկայներուն վրայ,  
միշտ աչքի մէջ կը նային և զսպանակի մը  
պէս լարուած կը կենան, այնպէս որ սխալ-  
մամբ երբ մօտեննուն անցնիս գիրկդ կը նե-  
տուին:

Եւ որովհետեւ ամէն տեղ, ամէն սալօն  
և ամէն մօնտ՝ որ թարգմանի խալապալիս,  
որոնց մէջ խայա պալիս ալ կը գտնուի, ի-  
րար չեն նմանիր, ուստի հոս պիտի դասա-  
ւորեմ զանոնք տեղերու կարգաւ:

Նախ առնենք Բերայի մէջ սալօն մը և  
անոր տանսի լեզուն: Սա ալ չի մոռնամ ը-  
սելու որ ասկէ վերջ բոլոր գրուած խօսակ-  
ցութիւնները՝ պարի, Տանսի միջոցին եղած-  
ներն են:

— Նէ՛ զահմէթ ... Լուցիքա տուրուր  
ըգան պէնի անկաթէ իթտինիզ ...

— Արթըզ էլվէրիր, ուրմառքլարընըզ չըլ-  
տըրթտըրընորլար պէնի ... պէն բուծուռ  
լը մեմ օլտըզամա տուրքէ՝ օլուեօրսընըզ ...

— Հայը՛ր ... պիլիրսինիզ քի օ գատար  
ֆիւռիւեօզ տէյիլիմ, ֆագաթ արքանսիօնըմա  
չառըտըտա, օնըն իյին ուֆագ պիր ալլիւզիօն  
իթմէք իսթէտիմ ...

— Այգըռը, ուրուր չէյսինիզ տօղուսու,  
վու բուվէ պիէն Ֆօնթէ սիւռ մուա քի, սիզ-  
տէն պաշկա քիմսէյէ սեմբարիմ եօզ տըր ...

— Էօյլէ եա՛ ... էկէր կէօղիւնիւզէ պագ-  
մասայըտըմ, պաշկասընը անկաթէ էտիօրըտը-  
նըզ, սանըֆեռիէն տօթուռ, պիզ էրքէլէ-  
րի բէք եագընտան էթիւտ էթմիշիզ տիր ...

— Պլա՛կ տըր տէտիյինիզ եօգսա մը վէ-  
ռիթէ, աթտըղընը թաշլար բէք Ֆօն կէլի-  
յօրլար մատմազէլ ...

— Պիր ազ եմսիօնէ օլմուշումտա օն-  
տան տըր, մէրագ էթմէյինիզ տօթուռ, իլէ-  
րուտէ կէնէ պու ռըմառզլարը ռեթթէ էթ-  
մէք ֆրսաթը կէլիր ...

— Մա բառօլ, բէշէ տիր պու սէօյլէտիք-  
լէրինիզ, մէ՛, զարար եօզ մինեօնըմ, սօղրա  
աննարսընըզ իննօսանըղըմը ...

\* \* \*

— Քաթիւլ մէնտէսը ուզէրէիք, զրկեցի  
օրիորդ, ձեռքերնիզ հասա՛ւ ...

— Ախ ... չատ չնորհակալ եմ, և գրե-  
թէ աւարտելու մօտ ...

— Անցեալ իրինկուն X եանին սուառէին  
էք եղէր, դէբաղդարար չի կրցի գալ, որով-  
հետեւ ուրիշ տեղ խօսք տուած էի ...

— Հարկա՛ւ ... մարդս միշտ աղէկին,  
և յարմարին կը ձգտի ...

— Քաւ լիցի օրիորդ, չեմ ընդունիր, գի-  
տէք որ ...

— Այո՛, գիտեմ թէ այս տեսակ խնդիր-  
ներու մէջ տօթթէօն ան տուռաէ մը աւելի  
փորձառութիւն ունիք ձեր դատը պաշտպա-  
նելու մէջ ...

— Հաւատացէ՛ք ...

— Կը հաւատամ այո՛, կը հաւատամ թէ՛  
դուք երիտասարդներդ որքան փոփոխամիտ  
էք, բան մը՝ զոր լինով վերագրուած է միշտ ...

\* \* \*

— Եթէ մերժէի՛ք տիկին, չանթահար  
պիտի ըլլայի ...

— Ինչո՛ւ ...

— Որովհետեւ շատեր փափաքեցան ձեզի  
անկաթէ ընելու, սակայն չէին համարձակէր  
կոր ...

— Լաւ, դուք ի՞նչպէս համարձակեցաք ...

— Մենք երիտասարդներս նայուածքի  
մէջ հատորներ կը կարդանք տիկին, բայց ի՞նչ  
օգուտ որ ...

— Հասկցայ, բայց գիտցէք որ կամքին  
ձեռքէն բան չի փախչիր ...

— Չարաչար ազնիւ էք տիկին, երանի  
թէ այս սալօնէն դուրս ալ նոյն գաղափա-  
րին տէրը գտնուէիք, որչա՛փ երջանիկ պիտի  
ըլլայի ...

— Կրնա՛մ վստահիլ ձեր երիտասարդի  
խել խօլ զգացումներուն ...

— Երիտասարդներ կան Տիկին, որոնց ոչ  
յառաջացեալ տարիքին տակ, գաղտնեաց ար-  
կըղներ կը գտնուին և պէտք է գիտնաք որ  
իմ սիրտ-արկղիս բանալին կորսնցուցած եմ,  
որպէս զի նոյն իսկ ես չի կարենամ բանալ ...

— Վաղը կէս օրէն վերջը տունը կըլլամ ...

\* \* \*

— Որչափ պաղեր է ձեռքերնիդ օրիորդ ...

— Ձեռքերս միայն ունիմ, որոնք երբէք  
չեն տաքնար ...

— Սրտերնուդ տաքութեան վրայ կատ-  
կած չունիմ, X ին հետ տեսնուողը միշտ ...

— Չեմ ընդունիր ... ձեզի ո՞վ յամար-  
ձակութիւն տուաւ, նոյն իսկ այդպէս խոր-  
հելու ...

— Ներեցէք օրիորդ, կատակ էր ըսածս ...

— Խնդրեմ, մեռսի, (կուզէ թողուլ պարը)։

— Վշտացա՛ք օրիորդ ...

— Մէռսի՛ ... մէռսի՛ ... քիչ մը գլուխս  
դարձաւ, ներողութիւն ...

\* \* \*

— Վալլահա մատմազէլ, թուալէթինիզ  
բէք գըլագ, պիպէռ կիպի եագըյօրսընըզ ...

— Օհի քալէ ... թիթօթա տէն ինէ ...

— Նասըլ թիթօթա տէն ինէ, ուշույօր-  
սընըզ մատմազէլ, թէպրիք իտէրիմ ...

— Կէցէն սէնէքի պլուղում տըր ...

— Եօզսա սիդին կիւղէլիյինիդ տիր քի էօյլէ կէօսթէրիօր ...

— Պէն կիւղէլ իմ, էլա բանայիամու ...

— Աման մատմազէլ, եիւրէյիմին չար բընթընը տո՛ւյմայօրսընըզ ... նէլէր օլույօր ...

— Հայտէ մասքառա, թի լէս ...

— Ա՛խ մատմազէլ ... սիդի բէք չօգ սէվիօրըմ ... պիւսէնի՞զ ...

— Խոխսթէմու քալէ, թի լօիա ինէ աֆթա ...

— Էկէր իսթէրսէնիզ ուռումտա օլուրում մատմազէլ, մա բառօլ:

\* \* \*

Գասը-գիւղի սալօններուն մէջ.

— Տակաւին մանտօլին կը զարնէ՞ք կոր օրիորդ ...

— Այո՛, երբեմն ...

— Ձեր բարեձեւ մատներէն կապասուի տըղէն ...

— Ֆլաթէ կընէք կոր ...

— Ծշմարտութիւնը օրիորդ, հակառակը խորհիւր բեօե մըն է ...

— Հի՛ ... հի՛ ... հի՛ ...

— Գիտցէք որ այս գիշեր բոլոր գտնուողներուն վրայ մասնաւոր առաւելութիւն մը ունիք, զորս չատեր չեն կրնար նշմարել, բացի ...

— Բացի ձենէ՞ ... հի՛ ... հի՛ ... հի՛ ...

— Ծշմարտ կըսեմ օրիորդ, վկայ ճաշակս, հակառակը կրնա՞ք պնդել ...

— Կը ծաղրէ՞ք ...

— Ձէ՞ք զգար ձեռքիս ելեքտրական հոսանքը՝ որ սրտէս կուգայ ...

— Հա՛ ... վառարանը չեն վառէր ... կարկի է կը մսիք կոր ...

— Յուրտին սարսուռը՝ սիրոյ թրթռումներուն հետ կը շփոթէք կոր օրիորդ ...

— Շատերէ լսած ըլլալու համար շատ հաւատ չեմ կրնար ընծայել ...:

\* \* \*

— Անցեալ տարուան վրայ բաւական գիրքեր էք Տիկին ...

— Այդպէ՛ս կը գտնէք, ... կարելիէ ...

— Ձեմ գիտե՛ր ինչու Տիկին, ամէն անգամ որ ձեզի հանդիպիմ, մասնաւոր համակրութիւն մը սիրտս չկը պատէ ...

— Զարմանալի բան, ա՛յդքանի ...

— Հաւատացէ՛ք Տիկին, և որչափ երջանիկ ու բարեբաղդ է ձեր ամուսինը, որ ձեզի պէս հրեշտակ մը ունի թեւին տակ, սըրտին մօտ ...

— Անգամ մըն ալ իրե՛ն հարցուցէք ... օձ կը տեսնայ կարծես ...

— Էնսանսէ՛ն, վատը՛, անզգա՛ն ...

— Ի՛նչ հոտ է վրա՛դ ... ի՛նչ անուշ կը հոտի կոր ...

— Լիւա պլան է Տիկին, ձեզի ղրկեմ ...

— Ա՛խ շնորհակալ եմ, չէ՛, չէ՛, գիտես որ մերինը եթէ հասկնայ ...

— Բայց ես առանց անոր հասկցնելու կըրնամ ձեր ձեռքը հասցնել Տիկին, բաւական է որ դուք ընդունելու հաւանութիւն տաք ...:

\* \* \*

— Հակառակ յոգնած ըլլալնուդ՝ զիս չի մերժելով անկաժըմանս ընդունելնուդ համար երախտապարտ եմ օրիորդ ...

— . . . . .

— Երկու տարիէ ի վեր տաճած փափաքս՝ ահա այս իրիկուն իրականացաւ ...

— . . . . .

— Ձէք պատասխաներ կոր օրիորդ ... միթէ չէ՞ք ակոթօր այս տե ...

— Նշանած եմ ...

— Ի՛նչ կըսէք, բնաւ տեղեկութիւն չունիմ, ափսո՛ս ... կրնա՞մ արդեօք ձեր խօսեցեալին ո՞վ ըլլալը իմանալ ...

— Հոս չէ, Զօնկուլտաքէն է, մայրիկս ըսաւ որ գործը շտկէ նէ պիտի գայ, հարսնիքը պիտի ընենք ...

— . . . . .

\* \* \*

Սկիւսարի սալօններուն մէջ

— Կամաց ճանը՛մ, բէք կը ցատկցունես կոր ...

— Նուվօթէ է օրիորդ, հիմա ասանկ կը խաղան կոր Բերտիյի մէջ ...

— Ազէկ ամա, քիչ մը շնորհքով խաղանք, բիւթիւն մեզի սէյիր կընեն կոր ...

— Ա՛խ խուշս, ինքզինքս երջանիկ կը զգամ կոր այս պահուս ձեր մօտը, ձեզի հետ գտնուելուս համար ...

— Օ՛ֆ ... Թացիկէնսիւ մըլար կէնէ, օյինըդ խաղայ ...

— Գիտցէք որ ոտքերս մէջէ մէջ կանցնին կոր Օրիորդ ...

— Թող քիչ մը քիչ խմէիր ...

— Շատ խիստ էք օրիորդ, չափազանց կրակոտ ...

— Հասկցայ ... մէռսի, քիչ մը յողնուծիւն պիտի առնեմ ...

\* \* \*

— Սուտ ես սուտ, դուն ինծի չես սիրէր, բիւթիւն սուտ ես ...

— Ինչէն կը հասկընաս կոր քի սուտ եմ տէյի, նայէ է՛ն առաջ քեզի անկաժե ըրի, ատկէ՛ ալ չես հասկնար կոր քի ...

— Հասկցայ ամա, տէմին քանաբէին վըրայ նստէր էիր նէ, այնային մէջէն կը տեսնայի կոր, պիր տիւզ Շահանդուխին կը նայէիր կոր ...

— Հա՛ ... իմ այնան նայելս պաշխա միտքով է՛ր, ես ՅՅը կը դնեմ, թէմիզ ես խա չունէի հօրս ետխաներէն դրեր եմ տէ, կը նայէի կոր քի, աճապա վեր կը թռի կոր տէյի ...

— Ուշտումմասիօն ... , ինչ է նէ ճանըմ զօռովէն չէ, ինծի երիտասարդ պակաս ըլլայ ...

— Ես գիտեմ զաթը, աղջիկ չէ՛ք մի, զօպա թէփէսի ... :

\* \* \*

— Էյ բէք աղէկ ... անէ քի մայրդ չուզէր կոր նէ կտրուինք ...

— Սատկիմ նէ ալ առնեմ պիտի ... չէնէ ինքիդինքս պիտի զարնեմ ...

— Ատ կէօզ տաղին ինծի տալուդ, մորը ըսէ տէ աչքերնին վախցուր ...

— Բէք աղէկ, էկէր չըլլայ տէ ես սուտնըս ձգեմ փախչիմ նէ հետս կուգաս ...

— Ես չըլլախ դուն չըլլախ, ո՛ւր պիտի երթանք ... հա՛, հա՛, հա՛ ...

— Տեսար քի աշկղ փարայի է ... ինծի չե՛ս ուզեր կոր, դուն փարան ի՛նչ պիտի ընես ...

— Մայմունի պէս ծառերուն վըայ ապրելու չենք, ամէն բան փարայով կըլլայ ...

— Մեղք ... մեղք ինծի քի խաֆայիս

տէնկ մէկը չի գտայ դէմս ... մե՛ղք, հա՛զար մե՛ղք ...

— Ը՛նհ ... նէվաղիլիի պէս արցունքնիդ ալ քիթերնուդ ծարն է ... , կը սիրեմ կոր իշտէ, կը սիրեմ կոր ամա, հոգիս ալ քենէ էվէլ կը սիրեմ կոր ...

— Աս իրինկուն աս սալօնը գերեզմանս պիտի ըլլայ ...

— Ճիտա՛մ ... :

\* \* \*

— Այս խոսական պարերուն միջոցին օրիորդ, չեմ գիտեր ինչ մը կուզէ թառիլ սըրտիս բարձրավանդակին վրայ սէրս երգելու ...

— . . . . .

— Սէրը թոյն մըն է օրիորդ, խմուածքը անուշ, սակայն աղքեցուծիւնը մահացու ...

— . . . . .

— Դուրեան մը ըլլալ կուզեմ կոր օրիորդ, Պետրոս Դուրեան մը որ տրտնջամ Աստուծոյս զիս զգայուն ստեղծած ըլլալուն համար ...

— . . . . .

— Ախ ... ձեր լուծիւնը կիսավառածութե մը դուրս եկող թոյնին պէս է օրիորդ, անզգալաբար մեռցնող ...

— . . . . .

— Ձեր սրտին բաբախումը ի՛նչ բանի կրնամ վերագրել օրիորդ, եթէ ոչ անդուսպ սիրային արտայայտութեան մը, զոր կը քաշուիք դուրս տալ ...

— Աման փսխեմ պիտի ... միտեայ իչիի թափա կերայ տէ ... :

\* \* \*

Արուարձան մը՝ որուն անունը հանելուկ մը քող մնայ .

— Անկաժէ կըլլա՛ս քա ...

— Ի՛նչ պիտոր խաղանք քի ...

— Բօլքա է ի՛նչ է իշտէ, եկուր մէյմը տառցունեմ քեզի ...

— Էյ աման դուն ալ, մարդ չի գտար տէ իս պիտի տառցունես ...

— Ան կարմրուկ էրէմներուդ արեւուն, էօլիւեօրում քա՛ ...

— Կը սոսկամ կոր աման, հայտէ տէֆ եղիր ...

— Օլմազ, մէյմը տառցունեմ պիտի ...

— Երկու աչկդ չի քնոնայ քի պալթա եղար աս գիշեր ...

— Հա չէոյէ, քէնտինի կէօքսիւմէ վեր պագայլ՞մ ...

— Կամաց քա՞ ... օսկոռներս պիտի կոտարես ...

— Վայ պէնիմ եատէս քէմիքլի կիւլ ֆիտանըմ, թռալալա, թռալալա ...:

\* \* \*

— Հայտէ՛, հայտէ՛, եանշախութին չուզէր, քեզ ալ հասկցայ ...

— Աման մատմազէլ, ոտքիդ տապանը կոծեմ ...

— Մընտըռութան վրայ եմ կոխեր ... առանկ լաֆերու չեմ իզար կոր ...

— Մեռելդ լուամ տէ ճուրը խմեմ հոգիս կէշ մըսէր, նայէ ֆէնէն եմ տառցէր ...

— Լուսդ պաշխասիին պոնէ, ինծի պէտքութին չունի, զաթը հետդ խաղալու ելայ նէ սօն ճուղապս տամ տէյի էր ...

— Լէշս պերանդ ըլլայ Ուսկուկ, էօլտիւր պէնի ...

— Ան վախիթ մըն էր, կիտե՛ս եա, քեզի համար երկու շաբաթ թամամ լահանայ թուռչուսիին ճուրին հաց եմ թաթխէր ...

— Ես ալ հիմա ճիվէրուդ ճուրը խմեմ, եկուր չէ մըսէր Ուսկուկ ...

— Բէք աղէ՛կ, թէքէճիին բօստալին հետ պիտի կէօրիւշմիւշ ըլլա՞ս ... երդում մը ըրէ նայիմ ...

— Պատանքդ պագնեմ էկէր մէյ մըն ալ ան թառաֆէն անցնելու ըլլամ նէ ...

— Է՛հ ... դուն գիտե՛ս ...

— Եարատանըմ Ալլահ, չալ պէ Աբօսթօլ ...

ԼԻԼԱ

## ՍՐԱՄԻՏ ԶԲՕՍԱՆՔ

Մեր նախորդ թիւին մէջի Արամիս գրօսանքին համար մեզ հասած 57 լուծումներուն մէջէն ճիշդ լուծող մը չի գտնուելուն՝ մինչև գալ թիւը պայմանը կերկարենք, հակառակ պարագային պիտի ստիպուինք դնել լուծումը:

## ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

**ԲԵՐԱ.** — Առնուվօ չըլլայ, ծանօթ երգիծարան մը, իր յօդուածին փոխարէն ըստացած դրամը ձեռք անցնելէ անմիջապէս վերջ, չունչը Բիկմալիոնին առնելով՝ սեւով վարդագոյն ժառըքիւհներ է գնած եւ իր յաւէտ անբաժան Տիւլսինէին նուիրած է:

**ՆՈՅՆ.** — Հայ-Լայֆ տուններէն միոյն Յոյն սպասուհին, անեցիներուն բոհեռէն օգտուելով, անցեալ գիշեր պարահանդէս գացած և ալ չէ վերադարձած: Կարեւոր պարգեւ մը խոստացուած է այն բալիֆաբեաին, որ յաջողի ձեռք ձգել և յանձնել խուրտուխաշ չեղած:

**ԲԱՆԿԱԼԹԻ.** — Հոս, կարգ մը տիպաբանող մատմազէլներ, բարեկենդանի քօթիւմ կրելու համար՝ գիշերը ցերեկին խառնած են: Եւ փոխադարձաբար կարգ մը միւսիւններ ալ, նոյնները զբօսցնելու համար, հարիւրին քսանը չորս տոկոսով դրամ կը փնտռեն կոր, նոյնպէս ցորեկը գիշերին խառնած:

**ՍԿԻԻՏԱՐ.** — Տեղացի միւսիւ մը, շաբաթէ մը ի վեր բանը գործը ձգած, տանը մէջ ոտքերը ջուրը դնելէ վերջ, օրը երկու ժամ տանի փորձեր ընելու վրայ է՝ բարեկենդանի առթիւ պարահանդէսներու վարժութեան համար:

**ՕՐԹԱԳԻԻՂ.** — Նորակազմելի եռաձայն դպրաց դասին համար մասնաւորաբար մէկ քանի անձեր գիւղերը զրկուելով թարմ հաւկիթ կը փնտռեն: (Ուշադրութիւն, ճամբան չելլան կոտրեն ու մնտոն. Ծ. Խ.):

**ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ.** — Անցեալ իրիկուն երկու զաւկի տէր տիկին մը Բերա անցնելով՝ սեւ սօմինոյով մը, հոս հոն լէվին լէվին ամուսինը փնտռեր է:

Ursofusskr ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏԳԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի քիւ 52.

## ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

— Ինչպէ՞ս, վարձակալ չիկա՞յ:

— Ո՛հ, մինակ առաջին յարկը պարոն Լըռուները կան, առ սենեակը շտկած են գաւառը գտնուող իրենց ծնողներուն համար:

— Որոնք երէկ գիշեր եկան,

— Թերեւս... կը քնանայի... սակայն չեմ կարծեր, ահա բանալին... որ չուզեցին:

Այդ բանալիով Կանիմարտ դուռը բացաւ՝ որ գաւիթին մէկ ծայրը կը գտնուէր: Գետնայարկը երկու սենեակ կար, երկուքն ալ պարապ էին:

— Եւ առաջին յարկը հապա, փսփսաց Շօլմա Կանիմարտին, անկասկած առաջին յարկն են,

— Իրաւ ըսիր, պէտք է սա Լըռուները նայիլ,

Քննիչը սանդուխէն վեր ելաւ: Ձանգակին ձայնէն դուռը բացուելով մարդ մը երեւցաւ չապիկը թեւին վրայ և բարկացած երեւոյթով մը.

— Է՛հ, ի՞նչ է աս աղմուկը նայի՛նք, ըսաւ ու կեցաւ զարմացած եւ շարունակեց.

— Իրա՛ւ որ չեմ երազեր կոր, Պ. Կանիմարտն է...

Կատաղի խնդուք մըն է պոռթկաց. Կանիմարտ կը մարէր խնդալէ:

— Դո՛ւք, Լըռու, կակազեց Կանիմարտ, օ՛հ ի՛նչ զուարճալի է, Լըռու, Արսէն Լիւբէնի գործակիցը... աս, հիմայ պիտի մարիմ խնդալէ, և եղբայրդ ո՛ւր է Լըռու...

Ուրիշ անձ մը մօտեցաւ, որուն երեւումը ա՛լ աւելի կրկնապատկեց Կանիմարտի դուարթութիւնը:

Եւ Շօլմաի դառնալով սկսաւ ներկայացնել դաննք.

— Վիքթօր Լըռու, ոստիկանական քննիչ, մէկը ամէնէն լաւագոյններէն: Անոր եղբայրը էտուարտ Լըռու, գլխաւոր վերակացու մարդաչափական հաստատութեան:

Հէրլօք Շօլմա ձայն չհանեց. բողոքել, ամբաստանել այս երկու մարդիկը՝ պարապ բան էր:

Ձայրացած, ձեռքերը սեղմած, կը ջանար չմատնել կատաղութիւնը ու յուսախաբութիւնը Կանիմարտի առջեւ: Բարեւեց յարգանքով Լըռու եղբայրները և Կանիմարտի հետ մեկնեցաւ:

Գաւիթին մէջ, դէպի ցած դուռ մը նըշան մը դրաւ: Դուրս ելաւ: Իրեն դուրս ելած տունին քովի տունին վրայ կարգաց հետեւեալ արձանագրութիւնը.

«Լիւսիէն Տէսթանտ, ճարտարապետ. 1877»

Նոյն արձանագրութիւնը նաև անոր քովի 42 թիւով տունին վրայ ալ:

— Մի՛շտ զոյգ ելքեր, մտածեց, ի՛նչպէս չմտածեցի, պէտք էր որ գիշերը երկու ոստիկաններուն հետ կենայի, ու երկու ոստիկաններուն ըսաւ. Գիշերը երկու մարդիկ մեկնեցա՞ն այս տունէն իմ բացակայութեանըս տեսն, եւ 42 թիւ կը յուցնէր:

— Այո, մարդ մը և կին մը, ըսաւ ոստիկաններէն մին:

Գլխաւոր քննիչ Կանիմարտի թեւը բռնելով ըսաւ Շօլմա. — Պարոն Կանիմարտ, բաւական խնդացիք, և չատ կ'ենթադրեմ քեզ տուած ձանձրոյթս, հիմակ, դուք ալ չէ՞ք բաղձար որ ամէն բան լրանայ: Ահա եօթներորդ օրն ենք, երեք օրէն անպատճառ պէ՛տք է որ Լոնտոն երթամ:

— Օ՛հ, օհ...

— Պիտի ըլլա՛մ պարոն, և կը խնդրեմ ձեզմէ միշտ պատրաստ գտնուիլ:

— Միեւնոյն կերպով, յարեց Կանիմարտ հեզնելով.

— Այո, միեւնոյն կերպով:

Վերջը յաջորդ թիւով

# ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԵԳ ԵՎ ՏՊԱՅՈՑ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՎ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանստ, Թօփաշեան խան  
Սոյն վաճառատունը, որ տարիներէ  
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց  
տոկոսնութեամբ և գինեքու անմրցելի  
աժանութեամբը չահած է բոլոր իրեն  
գիմող յաճախորդաց վատահոլութիւնը,  
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր  
հագուստներու, կանանց բեղուններու  
և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկ-  
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,  
որ յերմապէս կը յանձնարարուի ամէն  
անոնց, որոնք պէտք ունին ներկայ  
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-  
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:  
Գաւառներէն յանձնարարութիւնը  
փութով կը կատարուին: 50—22



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպայ պէյ խանին  
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,  
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,  
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապէտ եւ Ճա-  
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-  
նան գոհանալ թէյերու թարմութեամբ  
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-  
տուկ խառնուրդները, որք կը ծախ-  
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

|                                  |        |           |        |
|----------------------------------|--------|-----------|--------|
| Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին | 50 դր. | Վեցամսեայ | 25 դր. |
| Գաւառաց համար                    | »      | »         | 54 »   |
| Արսասանան                        | »      | »         | 12 ֆր. |
|                                  |        | »         | 6 ֆր.  |

## Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի Զասսկսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործախայներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան  
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաքաթով և կամ բոսթայի փուլով 20 հաւը  
20 զրուշի հաշուով:

1908

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆՆ

## ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԳՐԳԻՆ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՊԷՍ ՓՈՐԱԳՐՈՒԱԾ  
300 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Անմրցելիորեն բնօրինակով Ղասազիբը՝  
Տարր. Դասընթացի երկսեռ աշակերտաց հա-  
մար : Գին 5 դրու :

Կեդրոնատեղիին է հեղինակին սեպհական  
ԳԱՐՈՒՆ ԳՐԱՏՈՒՆԸ, Կ. Պոլիս, Մեծ Նոր  
խան, վերի յարկ, թիւ 55 :

## ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍՃԵԱՆ

3 Պահյե-գաբու թիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կըր-  
նաք գտնել այն ամէն չիք, տօկուն և  
աժան առարկայները, որոնք թօհա-  
ֆիլէի մաս կը կազմեն : Անգամ մը այ-  
ցելը համոզում պիտի կրնայ գոյաց-  
նել թէ ուրիշ ո՛ր է և տեղ չպիտի կըր-  
նաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը  
այն բնառուած արթիքօլօին վրայ :

40—6

## ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան թիւ 2

Նախ փորձառուները, յետոյ խար-  
ուողները միայն գիտեն թէ ո՛րչափ  
գոյար է, գտնել ու գնել ապրանք-  
ներ՝ որոնք թէ տօկուն ըլլան, թէ ճա-  
շակաւոր և թէ . . . աժան :

Գառնիկ Քէչիչեան վաճառատներս  
թօհաֆիլէի էն առաջնակարգ Եւրոպա-  
կան գործարաններէն բերել տուած է  
տեսակ տեսակ կանանց և արանց յա-  
տուկ Ֆանէլաներ, գուլպաներ, քաւիկնակ-  
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,  
Ֆիլիսօ և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-  
ներ, զլխու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ  
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ  
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն  
գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինե-  
րու աժանութեան, ճեսակի ազնուութեան և  
ապրանաց տկունութեան երեք առաւել-  
չութիւնները ուրիշ ո՛ր է և տեղ կարելի  
է գտնել :